

**ԳԵՐՄԱՆԱՅԻ ՀԱՅԱԳԵՏԻ ԿՈԹՈՂԱՅԻՆ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ***

Jürgen Gispert, Armenien gestern und heute – „Die Aschen der Opfer schlagen in unseren Herzen“. Zu einer Theorie der armenischen Memorialkultur, Leipzig, „Eudora-Verlag“, 2022, 492 S.¹

Բանալի բառեր – հայագետ, գերմանալեզու ընթերցող, արցախյան հիմնախնդիր, մեթոդաբանություն, հուշարձան, խաչքար, ազգային ինքնություն, Ռաֆայել Լեմկին, պանթյուրքիզմ, մշակույթի ոչնչացման ձևեր:



Գերմանացի ազգագրագետ և հայագետ դր. Յուրգեն Գիսպերտի անունը վաղուց է, ինչ հայտնի և սիրված է հայագիտական և պատմագիտական հանրույթի կողմից:

Հոր կողմից կիսով չափ հայ այս հետազոտողը հայոց պատմության և մասնավորապես ցեղասպանությանը վերաբերող իր ուսումնասիրություններում առաջնորդվում է բացառապես ճշմարտության բացահայտման և դրա գերակայության ընդգծման սկզբունքով՝ զերծ մնալով արտերկրի գիտական

շրջանակներում, ցավոք, ոչ հազվադեպ ի հայտ եկող արատավոր երևույթներից: Դրանք են պատմական փաստերի հարաբերա-

* Ընդունվել է տպագրության 19.09.2022:
1 **Յուրգեն Գիսպերտ**, Հայաստանը երեկ և այսօր. «Զոհերի աճյունները բաբախում են մեր սրտերում»: Հայկական հիշողության մշակույթի մի տեսության շուրջ, Լայպցիգ, «Օլորա» հրատ., 2022, 492 էջ:

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԴ (Ի) տարի, թիվ 3 (79), հուլիս-սեպտեմբեր, 2022

կանացումը, մեղքի և պատասխանատվության տարրալուծումը ոճ-րագործի և զոհի միջև, օսմանյան պետության իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետության կողմից ցեղասպանությունը ժխտելու, պատմությունը նենգափոխելու պայմաններում «հաշտության» կեղծ գաղափարի քարոզումը և այլն:

Օրերս Լայպցիգում լույս տեսավ Յու. Գիսպերտի «**Հայաստանը երեկ և այսօր. «Ջոհերի աճյունները բաբախում են մեր սրտերում»։ Հայկական հիշողության մշակույթի մի տեսության շուրջ**» ստվարածավալ (492 էջ) մենագրությունը, որը բաղկացած է առաջաբանից, 5 գլուխներից, 25 ենթագլուխներից և հավելվածից: Դրանում գերմանալեզու ընթերցողին բազմապիսի տեղեկություններ են հաղորդվում հայ ժողովրդի հոգևոր և մշակութային արժեքների, անցյալի ու ներկայի և այն նորագույն մարտահրավերների մասին, որոնց հաղթահարումը կարևոր նշանակություն ունի ինչպես հայոց պետականության, այնպես էլ հայ ինքնության պահպանման հարցում:

Սկզբից ևեթ նշենք, որ հեղինակը չի առաջնորդվել գիտական աշխատությունների շարադրման առավել ընդունված սկզբունքներով՝ դրանց ներկայացման **ժամանակագրական** կամ **թեմատիկ** հաջորդականությամբ: Բայց նկատի առնելով քննարկվող հարցերի բազմազանությունը՝ նման մոտեցումը պետք է համարել գրքի արժանիքներից մեկը: Օրինակ՝ նախքան իր աշխատության միջնամասում կամ վերջնամասում Ջուդայի խաչքարերի ոչնչացման փաստի կամ Սուոգայիթի և Բաքվի կոտորածների հանգամանալից լուսաբանումը հեղինակը սկզբում համառոտ տեղեկություններ է հաղորդում դրանց մասին: Այդ կերպ մի կողմից ամբողջացվում է աշխատության սկզբնամասում լուսաբանվող հարցերի համատեքստը, մյուս կողմից ընթերցողը համակվում է դրանք մանրամասն պարզաբանող հատվածներին հասնելու անհագ հետաքրքրությամբ:

Գիրքը **սկսվում է** վերջին տարիներին, մասնավորապես թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանում կատարված իրադարձությունների և նախընթաց իրողությունների լուսաբանմամբ, որոնք, շարունակ խորացնելով ժողովրդի և իշխանությունների միջև եղած անջրպետը, հանգեցրին 2018 թ. իշխանափոխությանը: Խոսքը վերաբերում է մասնավորապես ընտրությունների ժամանակ գրանց-

ված չարաշահումներին ու կեղծարարություններին, հանրապետության բնակչության սոցիալական ծանր դրությանը, իշխանությունների սոցիալ-տնտեսական քաղաքականության հանդեպ անվստահությանը և ներհասարակական միասնությունը խաթարող զանազան իրողությունների, այդ թվում՝ ԽՍՀՄ փլուզումից հետո Արևմուտքից առանձին աղանդների ներհոսքին և դրանց պառակտիչ գործունեությանը:

Երկրորդ գլխում հեղինակն անդրադարձ է կատարում հայոց պատմությանը՝ հաղորդելով կարևոր տեղեկություններ ինչպես Հայաստանի հնագույն անցյալի, այնպես էլ հին ու միջին և նոր ու նորագույն շրջանների առավել կարևոր իրադարձությունների և դրանց հետևանքների վերաբերյալ: Առանձին ենթագլուխներով քննության են ենթարկվում, մասնավորապես, Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքին, հայերի ծագմանը, հույների և պարսիկների հետ նրանց պատմական առնչություններին, քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուն և մեսրոպյան այբուբենի ստեղծմանը, ինչպես նաև օսմանյան պետության կազմում Արևմտյան Հայաստանի և հայ ժողովրդի դրությանը վերաբերող հարցերը: Բնականաբար, հանգամանալից պարզաբանում է ստանում նաև Հայկական հարցի ծագման և զարգացման պատմությունը:

Նորագույն շրջանում՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, հայ ժողովրդի առջև ծառայած նոր մարտահրավերների, Արցախյան առաջին պատերազմի և Ադրբեջանի հայատյաց քաղաքականության վերաբերյալ հեղինակային տեղեկություններն ամբողջանում և ավելի առարկայական են դառնում Արցախից սերող մի հայ ընտանիքի պատմության ներկայացմամբ, որն ուղղակիորեն ապրել է ինչպես Բաքվում հայերի զանգվածային հետապնդումների և տեղահանության, այնպես էլ դրանց հաջորդող դեգերումների սարսափներն ու դառնությունները: Գրքի կարևոր արժանիքներից է նաև արցախյան հիմնախնդրի պատմության և արցախյան հակամարտության առաջացման ու զարգացման հանգամանալից լուսաբանումը:

Յու. Գիսպերտը, որը նախկինում էլ բազմիցս հանդես է եկել արցախյան հիմնախնդրի մասին արժեքավոր հրապարակումներով և հարցի քաջագիտակ հետազոտողներից է, այն լուսաբանում է Ադրբեջանի հայատյաց քաղաքականության և Ադրբեջանի ու Թուր-

քիայի դաշնակցային հարաբերությունների համատեքստում՝ հաջորդաբար ներկայացնելով զանազան վայրերում հայերի հանդեպ իրականացված ոճրագործությունները:

Երրորդ գլուխը նվիրված է այն մեթոդաբանության ներկայացմանը, որով հեղինակն առաջնորդվել է հայերի ազգային-քաղաքական և հոգևոր-մշակութային ինքնության մեկնաբանության, հայոց անհատական և կոլեկտիվ հիշողության մշակույթի ու դրա յուրահատկությունների քննության ժամանակ: Հեղինակային դիտարկումների հիմնավորվածությունն ու անառարկելիությունն ընդգծելու համար հանգամանալից տեղեկություններ են հաղորդվում նաև այդ մեթոդաբանության զարգացման մեջ առանցքային դերակատարություն ունեցած ֆրանսիացի նշանավոր գիտնականներ **Մորիս Ալբլաքսի, Էմիլ Դուրկհայմի** և **Անրի Բերգսոնի**, ինչպես նաև գերմանացի գիտնականներ **Յան և Ալեյդա Ասմանների** գաղափարների ու գործունեության վերաբերյալ:

Քննարկվող հարցերի բազմազանության, դրանց ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական նշանակության տեսանկյունից առանձնակի կարևորություն ունի աշխատության **չորրորդ գլուխը**, որը նաև ամենաձավալունն է: Դրանում Յու. Գիսպերտը իրականացնում է հուշարձանի՝ որպես հավաքական հիշողության արգասիքի և այդ հիշողությունը սերունդներին փոխանցելու միջոցի քննությունը՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշարձան-համալիրի օրինակով: Այս համատեքստում, բնականաբար, ընթերցողը հանգամանալից կերպով իրագեկվում է նաև ցեղասպանության և դրա հետևանքների, 1965 թ. ազգային զարթոնքի, այդ տարվա ապրիլի 24-ին տեղի ունեցած ցույցերի և հանրահավաքների, համալիրի կառուցման, դրա խորհրդաբանության, ճարտարապետաշինարարական յուրահատկությունների և ցեղասպանության թանգարանի վերաբերյալ:

Մանրագնին տեղեկություններ են հաղորդվում նաև հայկական խաչքարերի, դրանց կառուցվածքի, պատմության և խաչքարագործական արվեստի՝ դարերի ընթացքում կրած փոփոխությունների մասին, և, որ առավել ուշագրավ է, հեղինակը փորձում է բացահայտել նաև այդ փոփոխությունների և հայոց պատմության քաղաքական շրջադարձերի փոխառնչությունները, այն ազդեցությունը,

որ ունեցել են այդ փոխառնչությունները ինչպես խաչքարագործության, այնպես էլ առհասարակ արվեստի և մշակույթի զարգացման ընթացքի վրա: Այս տեսանկյունից աշխատության չորրորդ գլխում մանրամասն քննության առարկա են դառնում, մասնավորապես, խաչակրաց ու մոնղոլական արշավանքները, խաչակիրների հետ հայերի փոխգործակցությունը և հայ-մոնղոլական հարաբերությունները: Ի թիվս այլ իրողությունների՝ ուշագրավ են մոնղոլադեմ Հիսուսի պատկերով «Ամենափրկիչ» խաչքարերի նկարագրությունը, Կիլիկիայի արվեստի և մշակույթի մեջ արևմտյան տարրերի ներկայացումը, որոնք էապես նպաստում են հեղինակի դիտարկումներն առարկայական ու դյուրընկալ դարձնելուն: Աշխատության այս գլուխն ամբողջանում է հայ միջնադարյան ճարտարապետության առանձնահատկությունների լուսաբանմամբ՝ Զվարթնոցի տաճարի, Ս. Գայանեի, Ս. Հռիփսիմեի, Հաղարծինի և բազմաթիվ այլ ճարտարապետական կոթողների օրինակով:

Յու. Գիսպերտն իր աշխատության մեջ զգալի տեղ է հատկացրել նաև շուրջ 20 տարի առաջ Ադրբեջանի իշխանությունների կողմից Ջուղայի խաչքարերի պարբերական ոչնչացման փաստի պարզաբանմանը, մի վայրագություն, որպիսին, ինչպես հեղինակն է ընդգծում, չի եղել մինչև իսկ Շահ Աբասի և Լենկթեմուրի արշավանքների ժամանակ: Շարունակելով զարգացնել թեման՝ նա առարկայորեն և բազմաթիվ փաստերով ներկայացնում է Ադրբեջանի հայատյաց քաղաքականության ընթացքը, զարգացումն ու հետևանքները: Սումգայիթի և Բաքվի կոտորածները, Արցախի գրավված շրջաններում հայ մշակույթի ոչնչացումն ու յուրացումը լուսաբանվում են հանգամանակից և նորովի՝ որպես թուրք-ադրբեջանական ցեղասպանական քաղաքականության հետևողական շարունակություն: Իսկ դրա արդիական-քաղաքական ենթատեքստը պարզ դարձնելու համար կատարվում են նաև արժեքավոր պարզաբանումներ ԽՍՀՄ փլուզումից հետո արցախյան հիմնախնդրին առնչվող նորագույն զարգացումների, Արցախյան շարժման, դրա նպատակների և ընթացքի վերաբերյալ:

Հայոց ազգային-հոգևոր կյանքում խաչքարագործական արվեստի և խաչքարերի բազմակողմանի նշանակությունը լուսաբանելիս հեղինակը ներկայացնում է նաև դրանց շուրջ հյուսված

առանձին լեզենդներ, որոնք ժողովրդի հավաքական հիշողությունը դարեր շարունակ պահպանել և փոխանցել է սերունդներին: Դրանց թվում է Նորատուսի խաչքարերին վերաբերող լեզենդը, որոնք, ինչպես ընդգծում է հեղինակը, Ջուղայի խաչքարերի ոչնչացումից հետո միջնադարյան խաչքարերի ամենամեծ հավաքանին են ներկայացնում: Ըստ այդ լեզենդի՝ Լենկթեմուրի արշավանքի ժամանակ Նորատուսի բնակիչները խաչքարերի վրա սաղավարտներ և դրանց հենված սրեր են դրել՝ Լենկթեմուրի և նրա զորքի մոտ հեռվից ստեղծելով այն տպավորությունը, թե համազգեստավորված ու զինված մարդկանց մի ամբողջ բանակ է իրենց դեմ կանգնած, և այդպես հարկադրելով նրանց նահանջել: **Ինչպես դիպուկ նշում է Յու. Գիսպերտը, դա իր մեջ խտացնում է հայ ազգային ինքնության պահպանման հարցում խաչքարերի, այն է՝ հոգևոր մշակույթի փրկարար առաքելության ըմբռնումը: Այսինքն՝ ժողովրդական պատկերացման մեջ դրանց վերագրվել է նույնիսկ ֆիզիկական փրկության կարևոր գրավականի դերը:**

Իր աշխատության նույն՝ չորրորդ գլխում լուսաբանելով Հայոց ցեղասպանության պատմությունը, դրա ընթացքը, հետևանքները և միաժամանակ փաստելով Թուրքիայի ու Ադրբեյջանի ցեղասպանական քաղաքականության շարունակումն այսօր՝ Յու. Գիսպերտը ներկայացնում է նաև ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման ուղղությամբ կատարված աշխատանքները: Նա մատնանշում է հայերի ցեղասպանության բացարձակ համապատասխանությունը միջազգայնորեն ընդունված «ցեղասպանություն» եզրույթին: Յու. Գիսպերտը դա փաստարկում է նաև հրեական հոլոքոստի հետ համեմատական քննություն կատարելով և միաժամանակ ընդգծում, որ ցեղասպանության ամբողջական ու վերջնական ճանաչման դեպքում այն դիտարկվելու է որպես անառարկելի պատմական իրողություն, և, բացի այդ, դրա ճանաչումն ու դատապարտումը կոչված են թույլ չտալու այդ հանցագործության ժխտումն ու կրկնությունը:

Գնահատելի է, որ զուգահեռաբար հանգամանալից պարզաբանում են ստանում Ռաֆայել Լեմկինի կողմից 1948 թ. հայտնի կոնվենցիայի ստեղծման շարժառիթները: Ինչպես տեղեկացնում է հեղինակը, այդ հարցում Լեմկինի համար վճռորոշ նշանակություն

են ունեցել համիդյան կոտորածները, Մեծ եղեռնը, անգլիացիների կողմից Մալթայում ներկայված երիտթուրք ոճրագործների ազատ արձակումը, Բեռլինում Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը, որին ներկա է եղել հետագայում՝ նյուրնբերգյան դատավարության ժամանակ որպես գլխավոր մեղադրող հանդես եկած Ռոբերտ Քեմպերը: «1915 թ. փորձառությունները և Թեհլիրյանի դատավարության մասին իրազեկվածությունը հասունացնում են նման հանցագործությունների կանխարգելման մի օրենքի ստեղծման վերաբերյալ Լեմկինյան գաղափարը, - նշում է Յու. Գիսպերտը: - Բեռլինի դատավարության տպավորության ներքո Լեմկինը բանավիճեց իր պրոֆեսորներից մեկի հետ և հարցրեց նրան, թե ինչու է Թեհլիրյանը մեղադրվել, այլ ոչ թե Թալեաթը, և նրան տրվեց պատասխան, որ չկա որևէ միջազգային օրենք, որի հիման վրա կարելի կլիներ Թալեաթին ձերբակալել և դատարանի առաջ կանգնեցնել»²:

Յու. Գիսպերտը Լեմկինի արխիվային նյութերի և այլ սկզբնաղբյուրների հիման վրա մանրագնին պարզաբանել է նաև հայկական թեմատիկայի հետ նրա առնչությունների պատմությունը, որոնք տևականորեն զբաղեցրել են Լեմկինին և հնարավորություն ընձեռել բավականաչափ իրազեկվելու հայ ժողովրդի և նրա պատմության վերաբերյալ:

Վերոնշյալի հետ մեկտեղ աշխատության մեջ մանրամասն ներկայացվում են նաև 1948 թ. ցեղասպանության կոնվենցիայի բովանդակությունը, դրա հեղինակմանն ու ՄԱԿ-ի կողմից ընդունմանն առնչվող հանգամանքները: Ուշագրավ է, որ, ինչպես փաստում է Յու. Գիսպերտը, Լեմկինը հակադրվել է հրեական հոլոքոստը բացառիկ կամ նոր բնույթի հանցագործություն համարող տեսակետներին: Ինչպես արձանագրում է Յու. Գիսպերտը, ըստ Լեմկինի՝ «Հոլոքոստը հին ֆենոմեն է՝ ներկայում ստացած նոր որակ»³: Սրանով Յու. Գիսպերտը կարևորել է այսօր էլ Հոլոքոստը «բացառիկ» համարող տեսակետի Լեմկինյան բավական խոստուն և հիմնավոր հերքումը:

Թեմայի լուսաբանման առումով զգալի արժեք է ներկայացնում նաև ցեղասպանության կոնվենցիայի հանդեպ ի հայտ եկած

2 Jürgen Gispert, Armenien gestern und heute – „Die Aschen der Opfer schlagen in unseren Herzen“. Zu einer Theorie der armenischen Memorialkultur, Leipzig, „Eudora-Verlag“, 2022, S. 360.

3 Նույն տեղում, էջ 362:

քննադատության և այն բարեփոխելու շուրջ վերջին տասնամյակներին ծավալված դիսկուրսի ներկայացումը Յու. Գիսպերտի կողմից: Պարզաբանելով այդ առնչությամբ արտահայտված հիմնական տեսակետները՝ Յու. Գիսպերտը՝ որպես հարցի քաջագիտակ հետազոտող, դրանց հանդեպ հանդես է բերում քննական մոտեցում՝ գնահատելով ու արժևորելով առաջադիմական տարրերը և չանտեսելով այն, ինչը կարող է վիճարկելի և խոցելի լինել: Ի թիվս կոնվենցիայի բարեփոխման համար անհրաժեշտ այլ հստակեցումների, փոփոխությունների և ամբողջացումների՝ նա հույժ կարևոր է համարում, մասնավորապես, պետության՝ որպես ցեղասպանության իրականացման վճռորոշ գործոնի պատասխանատվության ներառումն այդ փաստաթղթում: Հեղինակը հանգամանալից անդրադարձ է կատարում նյուրնբերգյան դատավարության ժամանակ Ա. Հիտլերի «Ո՛վ է հիմա խոսում հայերի բնաջնջման մասին» հայտնի նախադասության քննարկման պատմությանը, որը նա ասել էր Լեհաստանի վրա հարձակումից օրեր առաջ՝ 1939 թ. օգոստոսի 22-ին, Օբերգալցբերգում իր սպայակույտի առջև ունեցած ելույթում: Ինչպես նշում է Յու. Գիսպերտը, նյուրնբերգյան դատավարության ընթացքում քննարկման առարկա դարձած այդ նախադասությունը ի վերջո վավերական չհամարվեց որոշ կողմնակալ պատմաբանների, օրինակ՝ Դավիթ Իրվինգի և Թուրքիայի գործադրած ջանքերի շնորհիվ, որոնք, ըստ Յու. Գիսպերտի, համահունչ էին 1931 թ. Քենալի գրառած հետևյալ բանաձևին. «Պատմություն գրելը նույնքան կարևոր է, որքան պատմություն կերտելը»⁴: Յու. Գիսպերտը, ըստ այդմ, նյուրնբերգյան դատավարության ժամանակ Հիտլերի վերոնշյալ խոսքը բովանդակող փաստաթղթերի չկիրառումը համարում է քաղաքական ճնշման ներքո կատարված «սելեկցիայի» դրսևորում:

Աշխատության չորրորդ գլխի վերջին՝ եզրափակիչ ենթագլուխը նվիրված է արցախյան հակամարտության և դրա պատճառների համակողմանի լուսաբանմանը: Այն սկսվում է Ջուդայի գերեզմանատան ու խաչքարերի ոչնչացման և դրա քաղաքական ենթախորքի մանրամասն շարադրմամբ: Ճարտարապետ **Արմեն Հախնազարյանի** հետ ծանոթությունը Յու. Գիսպերտին հնարավորություն է տվել համակողմանիորեն իրազեկվելու Ադրբեջանի կառավարութ-

4 Նույն տեղում, էջ 367:

յան կողմից իրականացված այդ ոճրագործության վերաբերյալ, որը նա իրավացիորեն անվանում է մշակութային ցեղասպանության ցցուն օրինակ: Ջուդայի շուրջ 10.000 տապանաքարերն ու խաչքարերը, որոնց ոչնչացումը նկարահանվել է իրանական սահմանից, ինչպես նշում է հեղինակը, փաստում էին 5-17-րդ դարերում Նախիջևանի տարածքում հայկական հոծ մշակույթի առկայության մասին: Այնուհետև ներկայացվում է Նախիջևանի պատմությունը, որն առարկայանում է որպես հայ միջնադարյան գրչության և ճարտարապետության դարավոր կենտրոններից մեկը:

Այնուհետև հեղինակն անցում է կատարում Արցախի հիմնախնդրի առաջացման պատմությանը՝ միաժամանակ ներկայացնելով Լենինի և Ստալինի ընթնումներն ու դիրքորոշումը խորհրդային վարչակարգի և դրանում տարբեր էթնոսների ու ազգերի միավորման վերաբերյալ: Խորհրդային սահմանադրության 72-րդ հոդվածը, որը հանրապետություններին թույլատրում էր ինքնորոշման հիման վրա դուրս գալ ԽՍՀՄ-ից, և ԽՍՀՄ-ում 1990 թ. ապրիլի 3-ին ընդունված օրենքը, որն այդ իրավունքը վերապահում էր ոչ միայն միութենական հանրապետություններին, այլև ինքնավարություն ունեցող վարչատարածքային միավորներին, Յու. Գիսպերտի դիպուկ բնութագրմամբ, ԵԱՀԿ-ի կողմից միասնաբար չընդունվեցին: Վերջինս հիմք ընդունեց միայն 72-րդ հոդվածը՝ անտեսելով ապրիլի 3-ի օրենքը և այդպես անուղղակիորեն նպաստելով հակամարտության ծավալմանն ու հարատևմանը: Հեղինակը բնականաբար վեր է հանում նաև խորհրդային օրենսդրության բացերը և ԽՍՀՄ կառավարության հակասական գործելակերպը, ինչը ևս խոչընդոտում էր Արցախի օրինական ինքնորոշման ճանաչումը: Նա Արցախյան առաջին պատերազմի ժամանակ հայկական կողմի գործողությունների օրինականությունը փաստարկում է նաև այն հանգամանքով, որ մինչ Ադրբեջանի ղեկավարությունը վայնասուն էր բարձրացրել հայերի՝ Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը գրավելու մասին, հայկական զորքերը, որոնք պատերազմի առանձին փուլերում կարող էին հարյուրավոր կիլոմետրեր դեպի արևելք շարժվել, բավականացան միայն վերահսկողություն հաստատելով Լեռնային Ղարաբաղի տարածքի վրա և 30 կմ լայնությամբ անվտանգության գոտի ստեղծելով:

Յու. Գիսպերտն այնուհետև հանգամանալից քննական անդրադարձ է կատարում Արցախի՝ Ադրբեջանին պատկանելու վերաբերյալ վերջինիս ղեկավարության կողմից բերվող փաստարկումներին՝ մանրակրկիտ կերպով և հիմնավորապես հերքելով դրանք: Ավելին՝ նա ներկայացնում է նաև հարցի վերաբերյալ եվրոպացի հետազոտողների ուսումնասիրություններում արտահայտված տեսակետները՝ առադրելով և ամենայն խորագիտությամբ գնահատելով ու արժևորելով դրանք, իսկ հարկ եղած դեպքում կատարելով անհրաժեշտ սրբագրումներ:

Յու. Գիսպերտը փաստում է, որ Ադրբեջանը, որն անկախացել է ոչ ըստ Խորհրդային օրենսդրության, առանց հանրաքվե անցկացնելու և իրեն հռչակել ոչ թե Խորհրդային Ադրբեջանի, այլ 1918–1920 թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդ, դրանով իսկ Արցախի հանդեպ որևէ հավակնություն ներկայացնելու իրավունք չունի, քանի որ Արցախը երբևէ Ադրբեջանի անկախ հանրապետության մաս չի կազմել, և այդ հանրապետության սահմաններն էլ երբևէ միջազգայնորեն չեն ճանաչվել: Իսկ թե ինչու Խորհրդային Ադրբեջանն անկախացման նման ճանապարհ ընտրեց, հեղինակը պարզաբանում է, որ **եթե այն Խորհրդային օրենսդրության հիման վրա անկախանար, ապա ստիպված պետք է լիներ նաև ճանաչել Արցախի անկախությունը:**

Հարցի մանրագին, բազմաձև և ընդարձակ քննությունը, որ կատարել է Յու. Գիսպերտը, կարծում ենք, ունի արդիական քաղաքական մեծ կարևորություն և էապես օգտակար կլինի ոչ միայն դրանով զբաղվող պատմաբանների, այլև դիվանագիտական շրջանակների համար՝ թե՛ բանակցային գործընթացում հայկական կողմի դիրքերն ամրապնդելու, թե՛ համապատասխան հասարակական կարծիք ձևավորելու և թե՛ Ադրբեջանի պարբերական ապատեղեկատվության դեմ արդյունավետ պայքար մղելու առումով: Հեղինակը չի անտեսել նաև այն իրողությունը, որ ապատեղեկատվության տարածման նպատակով Ադրբեջանի կառավարության կողմից ֆինանսական մեծ ռեսուրսներ են ծախսվում:

Աշխատության չորրորդ գլխում մանրամասն անդրադարձ է կատարվում Ադրբեջանի և ադրբեջանական «էթնոսի» պատմությանը, որը սկսվում է 1918 թվականից: Ներկայացված են դրանում

թուրքական կառավարության ունեցած ներդրումը և դրա հետ կապված հեռահար քաղաքական նպատակները: Իսկ այն, որ այդ նորահռչակ հանրապետությունը Թուրքիայի թելադրանքով Ադրբեջան կոչվեց, հեղինակի իրավացի եզրահանգմամբ, վկայում էր հետագայում Իրանին նույնպես տարածքային պահանջներ ներկայացնելու հեռահար նկրտումների մասին, որոնք այսօր էլ պանթուրքիզմի քաղաքականության առանցքային նպատակներից են:

Հեղինակն այս կեղծարարություններին հակադրում է Արցախի հազարամյա պատմության ամփոփ շարադրանքը՝ դրանով փաստելով, որ Ադրբեջանը ոչ միայն արդի միջազգային իրավունքի, այլև պատմական իրավունքի տեսանկյունից հիմքեր չունի Արցախն իրենը համարելու: Խիստ արժեքավոր են Յու. Գիսպերտի դիտարկումներն ու պարզաբանումները հայկական մշակութային արժեքները յուրացնելու՝ Ադրբեջանի քաղաքականության վերաբերյալ: Դա առավել առարկայական դարձնելու համար Յու. Գիսպերտը մանրամասնորեն նկարագրում է 2012 թ. Բաքվում անցկացված եվրատեսիլյան երգի մրցույթի օրերին Ադրբեջանի կառավարության գործադրած ջանքերը: Այդ ժամանակ հյուրերի համար կազմակերպվեց մի ցուցահանդես, և ցուցադրվեց ադրբեջանական մի ֆիլմ, որում հայկական մշակութային արժեքները ներկայացվում էին որպես ադրբեջանական: «Ադրբեջանը էքսպանսիայի միջոցով, ամեն բան խժռելու մեթոդաբանությամբ ստեղծում է իր ինքնությունը, - նշում է հեղինակը: - Կոնկրետ մեր հետազոտության դիտանկյունից ադրբեջանական կողմի տրամադրության տակ խաչքարը սեփականացնելու երկու մեթոդ կա՝ կա՛մ խաչքարի պատմական և բովանդակային նկարագիրը խեղաթյուրել, ինչը կարելի է տեսնել Բաքվի ցուցահանդեսի օրինակով, կա՛մ խաչքարը՝ որպես նյութական գոյ, բացառել, ինչպես եղավ Նոր Զուղայում: Երկուսն էլ հայ մշակույթի հետ ադրբեջանցիների առնչության համատեքստում մշակույթի ոչնչացման ձևեր են: Նյութական գոյի ֆիզիկական ոչնչացմանը, ինչպես Զուղայի դեպքում էր, կարող ենք ավելացնել ոչնչացումը՝ հնարավորինս անվերապահ փոխակերպմամբ: Եթե նա (Ադրբեջանը - Ա. Հ.) սեփական ոչինչ չունի իր օրինականությունը փաստելու համար, ապա պետք է ոչնչացնի մյուսինը՝ իրեն ազգ դարձնելու համար»⁵:

5 Նույն տեղում, էջ 420-421:

Աշխատության եզրափակիչ՝ **հինգերորդ գլուխը** բովանդակում է հեղինակային եզրահանգումները քննության ենթարկված և լուսաբանված հարցերի վերաբերյալ: Ավելին՝ դրանք ամբողջանում են՝ համալրվելով նոր փաստերով և լրացուցիչ քննական դիտարկումներով: Յու. Գիսպերտը կրկին ընդգծում է հայկական հիշողության ժառանգման և փոխանցման առանձնահատկությունները, դրանք հիմնավորում ցեղասպանության սերնդեսերունդ փոխանցվող հիշողության օրինակով, որը երբևէ չի խամրում: Դա էլ, ըստ հեղինակի, հայ ազգային ինքնության ամրության և հարատևման, հայ ժողովրդի համախմբման, ուժի և կենսունակության գլխավոր պայմաններից մեկն է:

Յու. Գիսպերտի այս հիրավի կոթողային աշխատության մեջ քննարկվող բազմաթիվ և բազմազան հարցերն անհնար է մեկ գրախոսության սահմաններում ամբողջությամբ ներկայացնել: Աշխատությունն ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական խիստ կարևոր նշանակություն, որովհետև Գերմանիայում և եվրոպական այլ երկրներում Ադրբեջանն ու Թուրքիան հսկայական ջանքեր և նյութական միջոցներ են ծախսում հայոց պատմության, հայ մշակույթի և ինքնության վերաբերյալ խեղաթյուրված պատկերացումներ ձևավորելու համար: Այդ պատկերացումները հիմնովին հերքող Յու. Գիսպերտի աշխատությունը բովանդակում է նաև բազմաթիվ արժեքավոր քարտեզներ և լուսանկարներ, որոնք ոչ միայն նպաստում են նրա քննական լուսաբանումների և եզրակացությունների փաստարկմանը, այլև ապահովում են պատկերային ընկալում և ընթերցողին հաղորդում գիտելիքներ խաչքարերի, եկեղեցիների և հայկական այլ մշակութային արժեքների վերաբերյալ: Պետք է հուսալ, որ առաջիկայում կգտնվեն մեկենասներ, որոնք կհովանավորեն այս աշխատությունը ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն թարգմանելու և հրատարակելու գործը:

Աշոտ Ն. Հայրունի

Պատմ. գիտ. դոկտոր

Աշոտ Ն. Հայրունի – ունի 7 գիտական մենագրություն, որոնցից 3-ը՝ գերմաներեն, և շուրջ 200 գիտական հոդված, որոնց զգալի մասը լույս է տեսել Գերմանիայում գերմաներենով: Զբաղվում է Հայկական հարցին,

Հայոց ցեղասպանությանը, Առաջին աշխարհամարտին, Հայաստանի Հանրապետությանը և հայ-գերմանական հարաբերություններին վերաբերող խնդիրներով:

Էլ. հասցե՝ hayruniashot@gmail.com

Summary

THE GERMAN ARMENOLOGIST'S MONUMENTAL WORK

Jürgen Gispert, Armenien gestern und heute – „Die Aschen der Opfer schlagen in unseren Herzen“. Zu einer Theorie der armenischen Memorialkultur, Leipzig, Eudora-Verlag, 2022, 492 S.

Ashot N. Hayruni

Doctor of Sciences in History

Key word - Armenologist, German-speaking reader, the Artsakh issue, methodology, monument, cross-stone, national identity, Raphael Lemkin, Pan-Turkism, forms of cultural destruction.

A new extensive and valuable monograph (492 pp.) published in Leipzig titled “**Armenia yesterday and today – ‘The Remains of the Victims Beat in Our Hearts’. On a theory of the Armenian Memory Culture**” by the German ethnographer and Armenologist Dr. Jürgen Gispert provides the German-speaking reader with comprehensive information about the spiritual and cultural values of the Armenian people, their past and the present, including the contemporary challenges they are facing with, the overcoming of which is paramount for the preservation of the Armenian state and national identity.

The book begins with the coverage of the events that took place in the recent years, particularly after the "Velvet Revolution" and the previous realities, which, by continuously deepening the gap between the people and the authorities, ultimately culminated in the change of power. In particular, the author focuses on the irregularities, vote rigging and fraud that took place during the election process during the history of the Third Republic, the difficult social situation of the republic's population and the lack of trust in the public sphere towards the socio-economic policy of the authorities, as

well as the various realities that undermined the former intra-societal unity, including the influx of individual sects from the West after the collapse of the USSR and their divisive activities.

Afterwards, the author reflects upon the Armenian History, by outlining essential events from pre-historic, ancient, medieval, modern and contemporary Armenian history, especially focusing on those important events that shaped the course of history. The reader is thoroughly familiarized with the Armenian Genocide and its consequences. Detailed information is given about Armenian khachkars and Armenian culture in general. The systematic destruction of Jugha khachkars by the Azerbaijani authorities around 20 years ago is also outlined. Such criminal systematic destruction, as Gispert points out, had not even taken place during the invasions of Shah Abbas and Tamerlane. Further expanding on this subject, the author presents many facts about the course of events and consequences of Azerbaijan's current anti-Armenian policy. The massacres of Sumagait and Baku, the destruction and usurpation of Armenian culture in the occupied regions of Artsakh are covered thoroughly and are presented in a new light, as a consistent continuation of the Turkish-Azerbaijani genocidal policy.

The author covers in detail the history of the emergence of the Artsakh question, thoroughly refuting the false theses as presented by the Azeri government that Artsakh supposedly belongs to Azerbaijan. At the same time, the author presents a detailed study of the history of Azerbaijan and the emergence of the Azerbaijanis as an ethnic group, which takes place only after 1918. The author juxtaposes the above fact of the newly emerged Azeri state and ethnicity with the reality of a thousand-year history of Armenian Artsakh, pointing out that Azerbaijan from the viewpoint of historic rights, as well as from the standpoint of modern international law has no legitimate right to claim Artsakh as its own.

The above noted monumental study by Gispert has not only academic, but also political value taking into consideration the fact of how much efforts and material resources are spent by Azerbaijan and Turkey to create a distorted public opinion in the West about Armenian heritage, culture and identity. The work contains, apart from the text itself, many valuable maps and photographs. We really hope that patrons would be found who would

sponsor the translation and publication of this valuable work in Armenian, English and other languages.

Резюме

МОНУМЕНТАЛЬНЫЙ ТРУД НЕМЕЦКОГО АРМЕНОВЕДА
Jürgen Gispert, *Armenien gestern und heute – „Die Aschen der Opfer schlagen in unseren Herzen“*. Zu einer Theorie der armenischen Memorialkultur, Leipzig, Eudora-Verlag, 2022, 492 S.

Ашот Н. Айруни
Доктор ист. наук

Ключевые слова – арменовед, германоязычный читатель, Арцахский вопрос, методология, памятник, крест-камень (хачкар), национальная идентичность, Рафаель Лемкин, пантюркизм, формы уничтожения культуры.

На днях в Лейпциге вышла в свет объемная монография немецкого этнографа и арменовед Юргена Гисперта «Армения вчера и сегодня: «Прах жертв колотит наши сердца». Об одной теории культуры армянской памяти» (492 стр.), которая представляет немецкому читателю детальную информацию о духовных и культурных ценностях армянского народа, о его прошлом и настоящем, о тех вызовах новейшего времени, противостояние которым имеет важное значение как в аспекте укрепления армянской государственности, так и сохранения армянской идентичности.

Книга начинается с освещения событий последних лет, в частности «бархатной революции» и предшествующих ей явлений, которые, продолжая углублять пропасть между народом и властью, привели к смене этой самой власти. Речь идет, в частности, о фальсификациях и о злоупотреблениях властью и положением во время выборов в Третьей республике, о тяжелом социальном положении населения и о царящем в общественных кругах недоверии к социально-экономической политике властей, а также о различных факторах, раскалывающих

прежнее единство внутри общества, в том числе, о наплыве с Запада сект и их пагубном влиянии.

Затем Гисперт обращается к истории армянского народа, рассказывает как о древнейших временах, так и о древнем, среднем, новом и новейшем периодах истории Армении, делая акцент на событиях, повлиявших на ход истории, и их последствиях. Читатель получает обстоятельные сведения о Геноциде армян и его исходе. Дается полная информация и об армянской культуре в целом и об армянских хачкарах. Говорится об уничтожении в течение 20 лет азербайджанскими властями хачкаров в Джуге, о вандализме, которого не было со времен нашествий Шаха Аббаса и Тамерлана. Развивая тему, автор на основе многочисленных фактов представляет армянофобскую политику современного Азербайджана, процесс ее развития и ее последствия. Обстоятельно освещается резня в Сумгаите и Баку, уничтожение или присвоение памятников армянской культуры на захваченных территориях Арцаха. Все эти события представлены с точки зрения последовательного продолжения турецко-азербайджанской геноцидальной политики.

Юрген Гисперт детально описывает историю возникновения Арцахского вопроса, опровергая ложные тезисы Азербайджана о том, что Арцах принадлежит ему. В монографии также подробно представлена история возникновения Азербайджана датируемая 1918 г. и «азербайджанского этноса».

Автор сопоставляет указанный выше факт с тысячелетней историей Арцаха, заверяя, что Азербайджан не имеет оснований считать Арцах своим не только с точки зрения современного международного права, но и с точки зрения исторического права. Монументальный труд Гисперта имеет весомое научное, а также важное политическое значение, особенно если учесть, сколько усилий и материальных средств тратят Азербайджан и Турция на то, чтобы сформировать на Западе искаженное представление об истории Армении, об армянской культуре и армянской идентичности.

В монографии содержатся ценные карты и фотографии. Хочется надеяться, что найдутся меценаты, которые смогут осуществить публикацию данного труда на армянском, английском и других языках.